Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
մարտի 31-ի N 428 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ստուգաթերթ N 1.17
Մանրէազերծման գործունեության սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության
(ՏԳՏԴ ծածկագիր՝ Q 86.10)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

_____ _____
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

_____ _____
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ __ 20__թ._____ ավարտը՝___20___թ._____

_____
Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

_____ ՀՎՀՀ
Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_____ _____

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները (հեռախոսահամարը)

_____ _____

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20____թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

_____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

NN ը/կ	**Հարց**	**Պատասխան**
1.	Տնտեսավարող սուբյեկտի տվյալները (անվանումը, պետական գրանցման համարը, ամսաթիվը, վկայականի սերիան և համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, ղեկավարի անուն, ազգանուն, հայրանուն)	
2.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայր և կոնտակտային տվյալները	
3.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող մասնաճյուղերը և գտնվելու վայրը	
4.	Տնտեսավարող սուբյեկտի լիցենզիայի տեսակները	
5.	Տնտեսավարող սուբյեկտի աշխատողների թիվը	
6.	Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստման ենթակա անձանց թիվը և պատվաստվածների թիվը	
7.	Կազմակերպություն դիմած անձանց թիվը	
8.	Տնտեսավարող սուբյեկտում անցկացված վերջին ստուգման ավարտի ամսաթիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից բժշկական կազմակերպություններում բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

NN ը/կ	Հարցեր	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Բժշկական կազմակերպության ղեկավարի հրամանով նշանակված է բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման գործընթացի հսկողության պատասխանատու:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 22				3.0	Փաստաթղթային	
2.	Պատասխանատուն տարին մեկ անգամ և ըստ անհրաժեշտության բժշկական կազմակերպության ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գործողությունների պլան, որը ներառում է.	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 24						
2.1.	կազմակերպության ստորաբաժանումներում բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման գործընթացում ներգրավված բուժանձնակազմի անվանացանկը,					1.0	Փաստաթղթային	

2.2.	կազմակերպության ստորաբաժանումներում բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման, մանրէազերծման իրականացումը՝ ելնելով դրանց վտանգավորության աստիճանից,					2.0	Փաստաթղթային	
2.3.	վարակի հսկողության ծրագրից բխող միջոցառումներ (բուժանձնակազմի կրթում, վարակի հսկողության կազմակերպում, կլինիկա-համաճարակաբանական խորհրդատվություն, բժշկական թափոնների գործածության նկատմամբ հսկողություն)					2.0	Փաստաթղթային	
3.	Բժշկական կազմակերպության բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման գործընթացի հսկողության պատասխանատուն.	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 25						
3.1.	կիսամյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության մաքրման, ախտահանման, մանրէազերծման աշխատանքների վերաբերյալ կազմակերպում և իրականացնում է խորհրդակցություններ՝ համապատասխան բուժանձնակազմի հետ, որոնք արձանագրվում են, մասնակիցներն ստորագրում են՝ փաստելով իրենց մասնակցության մասին,					2.0	Փաստաթղթային	

3.2.	մշակում և բժշկական կազմակերպության ղեկավարի հաստատմանն է ներկայացնում մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման գործընթացների՝ ներառյալ կիրառվող քիմիական նյութերի և սարքերի օգտագործման գործընթացը քայլ առ քայլ նկարագրող գործունեության ստանդարտ ընթացակարգեր՝ համաձայն արտադրողի կողմից ներկայացված ուղեցույցների պահանջների և սահմանում է հսկողություն դրանց կատարման նկատմամբ,					2.0	Փաստաթղթային	
3.3.	ընդունվող աշխատակիցներին հրահանգավորում է ոլորտում առկա իրավական ակտերի պահանջների, անհատական պաշտպանության միջոցների կիրառման, քիմիական կամ կենսաբանական ազդակի ենթարկման դեպքը գրանցելու և հայտնելու կարգի վերաբերյալ, տեղեկատվություն է տրամադրում բոլոր այն կենսաբանական և քիմիական ազդակների մասին, որոնց ազդեցությանը կարող է ենթարկվել բժշկական միջամտություն իրականացնելիս, հրահանգավորման գործընթացն արձանագրվում է, մասնակիցներն ստորագրում են՝ փաստելով իրենց իրազեկման մասին,					2.0	Փաստաթղթային	

3.4.	հաշվառում և գրանցում է կազմակերպության աշխատակիցների շրջանում աշխատանքային գործունեության ընթացքում արձանագրված պատահական ծակոցները, կենսաբանական կամ քիմիական ազդակների վտանգավոր ազդեցության ենթարկվելու դեպքերը, սահմանում է հսկողություն ախտահանող միջոցների հետ աշխատելիս և միջամտություններ իրականացնելիս անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ:					2.0	Փաստաթղթային	
4.	Վիրուսային հեպատիտ Բ-ի վերաբերյալ հետազոտվող անձնակազմը պատվաստվում է վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 21				3.0	Փաստաթղթային	
5.	Բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման բոլոր փուլերում, ինչպես նաև բուժանձնակազմի ձեռքերի ախտահանման համար կիրառվող միջոցները և նյութերն օգտագործվում են դրանց կից մեթոդական ուղեցույցի պահանջների համաձայն՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 19				3.0	Փաստաթղթային	
6.	Ախտահանիչ նյութերով աշխատանքի հիմնական պահանջները.	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 33						

6.1.	օգտագործվում են միայն բժշկական կազմակերպության կողմից ձեռք բերված ախտահանիչ նյութեր, որոնք հսկվում են պատասխանատուի կողմից,					2.0	Փաստաթղթային	
6.2.	ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթը պատրաստվում է բաժանմունքի պատասխանատուի կողմից,					2.0	Դիտողական	
6.3.	աշխատանքային լուծույթի պատրաստման համար օգտագործվում է մաքուր, չոր, կափարիչով ամուր փակվող տարա՝ պահպանելով աշխատանքային լուծույթի խտությունը,					2.0	Դիտողական Լաբորատոր	
6.4.	աշխատանքային լուծույթ պատրաստելիս լուծվում է ախտահանիչ միջոցը ջրի համապատասխան քանակի մեջ՝ այն ավելացնելով ջրին:					2.0	Դիտողական Հարցում	
7.	Արյունով և/կամ այլ կենսաբանական հեղուկներով աղտոտված բժշկական արտադրատեսակներն օգտագործումից անմիջապես հետո ենթարկվում են մաքրման, որն իրականացվում է լվացող հեղուկի կամ ֆերմենտային նյութերի միջոցով՝ դրանց կից հրահանգներին համաձայն՝ խստորեն պահպանելով խտությունը, պահաժամը և ջերմաստիճանը, պիտանելիության ժամկետը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 26				3.0	Դիտողական Փաստաթղթային Հարցում	
8.	Բժշկական արտադրատեսակների լվացման համար օգտագործվող իրերը պահվում են ախտահանելուց հետո չոր վիճակում՝ մակնշված տարայի մեջ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 34				2.0	Դիտողական	

9.	Բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման վերաբերյալ կատարվում են գրանցումներ համապատասխան գրանցամատյանում: **Նշում 1***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 27				2.0	Փաստաթղթային	
10.	Բարձր մակարդակի ախտահանումից հետո բժշկական արտադրատեսակները լվացվում են մանրէազերծ ջրով կրկնակի, այնուհետև չորացվում մանրէազերծ սավանով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 32				3.0	Դիտողական Լաբորատոր Հարցում	
11.	Բարձր մակարդակի ախտահանված և մանրէազերծված բժշկական արտադրատեսակներն ընդհանուր բժշկական արտադրատեսակների խմբից յուրաքանչյուր անգամ վերցվում են միայն մանրէազերծ ունելիի կամ կորընցանգի օգնությամբ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 18				3.0	Դիտողական Հարցում	
12.	Մաքրող, ախտահանող միջոցները և նախամանրէազերծման համար օգտագործվող լուծույթները պահպանվում են հերմետիկ փակվող, առանց վնասվածքների տարաներում՝ օգտագործվող միջոցին կից հրահանգում նշված պայմաններում:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 36				2.0	Դիտողական	
13.	Մաքրող, ախտահանող, նախամանրէազերծող և մանրէազերծող միջոցների աշխատանքային լուծույթների համար նախատեսված տարաները մակնշված են՝ միջոցի անվանման, խտության, նշանակության, պատրաստման ամսաթվի, պիտանելիության ժամկետի վերաբերյալ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 37				2.0	Դիտողական	

14.	Բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման և նախամանրէազերծման, ինչպես նաև քիմիական մեթոդով մանրէազերծման համար նախատեսված տարաների ծավալը և լուծույթի ծավալն ապահովում են դրանց լրիվ ընկղմումը լուծույթի մեջ՝ պահպանելով բժշկական արտադրատեսակների վրա լուծույթի շերտի առնվազն 1 սմ հաստություն:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 38				2.0	Դիտողական	
15.	Բժշկական արտադրատեսակներն ընկղմվում են քանդված և առանձնացված վիճակում, իսկ փակվող մասեը՝ բաց վիճակում:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 38				2.0	Դիտողական	
16.	Բժշկական կազմակերպությունում օգտագործվում են միայն առանց կառուցվածքային մնասվածքների, կոռոզիայի հետքերի բժշկական արտադրատեսակներ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 35				2.0	Դիտողական	
17.	Ախտահանումից հետո իրականացվում է բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծում կամ այն համատեղվում է ախտահանման հետ մեկ գործընթացում:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 39				2.0	Դիտողական Փաստաթղթային	
18.	Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատվում է քիմիական զգայորոշիչների (ինդիկատորներ) միջոցով՝ արյան հետքերի, լվացող հեղուկում եղած հիմնային բաղադրամասերի (միայն այն դեպքում, երբ կիրառվող միջոցի աշխատանքային լուծույթի pH–ը 8,5-ից բարձր չէ) առկայության որոշման համար՝ համաձայն կիրառվող միջոցների ուղեկցող հրահանգների:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 40				3.0	Փաստաթղթային	

19.	Ախտահանման, նախամանրէազերծման որակի ստուգիչ փորձն իրականացվում է ամեն օր՝ յուրաքանչյուր գործընթացի ընթացքում միաժամանակ մշակված բժշկական արտադրատեսակների 10%-ի, բայց երեքից ոչ պակասի նկատմամբ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 41				2.0	Փաստաթղթային	
20.	Նախամանրէազերծման մշակման որակի հսկողության արդյունքների գրանցումներն իրականացվում են համապատասխան գրանցամատյանում: **Նշում 2***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 42				2.0	Փաստաթղթային	
21.	Արյան հետքերի հայտնաբերման դեպքում (դրական փորձ), մշակման ենթարկված բժշկական արտադրատեսակների ողջ քանակը կրկնակի մշակվում է՝ սկսած մաքրման փուլից՝ մինչև բացասական արդյունքը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 43				2.0	Փաստաթղթային Հարցում	
22.	Լվացող միջոցի հետքերի հայտնաբերման դեպքում (դրական փորձ) մշակման ենթարկված բժշկական արտադրատեսակների ողջ քանակը լվացվում է հոսող ջրով՝ մինչև բացասական արդյունքը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 44				1.0	Փաստաթղթային Հարցում	
23.	Բժշկական արտադրատեսակների մաքրումը, ախտահանումը և նախամանրէազերծումը կատարվում են անմիջապես օգտագործումից հետո՝ բաժանմունքներում, իսկ մանրէազերծումը՝ կենտրոնական մանրէազերծման բաժանմունքում:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 46				2.0	Դիտողական	

24.	Կենտրոնական մանրէազերծման բաժանմունքի բացակայության դեպքում, մշակման բոլոր փուլերն իրականացվում են բաժանմունքների առանձին սենքերում՝ բացառելով մանրէազերծ և կեղտոտ բժշկական արտադրատեսակների շփումը՝ ապահովելով բժշկական արտադրատեսակների լվացման համար առանձին մակնշված տարաներ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 47				3.0	Դիտողական	
25.	Կենտրոնական մանրէազերծման բաժնի սենքերը բաժանված են 3 գոտու՝ կեղտոտ, մաքուր և մանրէազերծ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 49				3.0	Դիտողական	
26.	Կեղտոտ գոտին բաղկացած է բժշկական արտադրատեսակների ընդունման և լվացման սենքերից:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 49				3.0	Դիտողական	
27.	Մաքուր գոտին բաղկացած է փաթեթավորման, լրակազմման (կոմպլեկտավորման) և մանրէազերծիչների բեռնման սենքերից:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 49				3.0	Դիտողական	
28.	Մանրէազերծ գոտին բաղկացած է մանրէազերծ նյութերի պահպանման և առաքման սենքերից:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 49				3.0	Դիտողական	
29.	Մանրէազերծ գոտու տարածքի կամ բաժանմունքների մանրէազերծման սենքերի օդն ախտահանվում է ուլտրամանուշակագույն ճառագայթներով (մանրէասպան լամպով):	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 49				3.0	Դիտողական	

30.	Կենտրոնական մանրէազերծման բաժնի սենքերի պատերը, կահավորման մակերեսները հարթ և ամբողջական են, ջրակայուն, լվացվող և ախտահանվող ծածկով, առանց քիվերի և զարդարանքների:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 50				3.0	Դիտողական	
31.	Կենտրոնական մանրէազերծման բաժինն ապահովված է՝	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 50						
31.1.	բնական օդափոխությամբ կամ ներհոս-արտաձիգ օդափոխության համակարգով,					3.0	Դիտողական	
31.2.	երկտեղանի լվացարաններով, որոնք ունեն արմնկային, դաստակային կամ ոտնակային կառավարմամբ կամ զգայական (սենսոր) կառավարմամբ ծորակներ:					3.0	Դիտողական	
32.	Բժշկական արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման գործընթացում ներգրավված բուժանձնակազմն աշխատանքի ընթացքում կրում է հատուկ պաշտպանիչ արտահագուստ՝ ձեռնոց, դիմակ, բժշկական գլխարկ, ակնոց և խալաթ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 51				2.0	Դիտողական	
33.	Բժշկական արտադրատեսակների մանրէազերծման գործընթացն իրականացնելու նպատակով բաժանմունքում առանձնացված սենքի համար պահպանվում են այն բոլոր պահանջները, որոնք ներկայացված են կենտրոնական մանրէազերծման սենքին:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 52				3.0	Դիտողական	

34.	Բոլոր այն սենքերում, որոնք համարվում են մաքուր գոտի պահպանվում են օդի աղտոտվածության թույլատրելի մակարդակները՝ մանրէների ընդհանուր քանակը 1մ³ օդում ոչ ավելի 500 մինչև աշխատանքների սկիզբը, ոչ ավելի 750 աշխատանքի ընթացքում, ոսկեգույն ստաֆիլակոկի գաղութների, խմորասնկերի և բորբոսասնկերի քանակը 1մ³ օդում՝ 0:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 53				3.0	Փաստաթղթային Լաբորատոր	
35.	Ֆիզիկական կամ քիմիական մեթոդներով մանրէազերծման նպատակով օգտագործվում են ստուգաչափված սարքեր և սարքավորումներ՝ տվյալ մոդելին կից շահագործման ուղեցույցին համապատասխան:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 54				3.0	Փաստաթղթային	
36.	Բժշկական արտադրատեսակների գոլորշային մանրէազերծումն իրականացվում է.	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 60						
36.1.	մանրէազերծման տուփերի մեջ առանց փաթեթավորման,					2.0	Դիտողական	
36.2.	մանրէազերծման տուփերի մեջ փաթեթավորված:					2.0	Դիտողական	
37.	Բժշկական արտադրատեսակների գոլորշային մեթոդով մանրէազերծում իրականացնելիս՝	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 65						

37.1.	բժշկական արտադրատեսակներն ազատ դասավորվում են մանրէազերծող սարքի խցիկում և մանրէազերծման տուփերում, պարկերում և փաթեթներում, որոնք բեռնվում են ոչ խիտ, քան մանրէազերծող սարքի խցիկի կամ մանրէազերծման տուփի ծավալի 70%-ը կամ երկու երրորդը (2/3-ը),					2.0	Դիտողական Հարցում	
37.2.	մանրէազերծման տուփի վրա նշվում են բաժանմունքը, մանրէազերծվող բժշկական արտադրատեսակների տեսակը,					2.0	Դիտողական	
37.3.	նախքան մանրէազերծումը մանրէազերծման տուփը գոտևորող մետաղական գոտին բացվում է,					2.0	Դիտողական Հարցում	
37.4.	մանրէազերծման ավարտից հետո, նախքան մանրէազերծող սարքից հանելը, տուփը գոտևորող մետաղական գոտին փակվում է, տուփի վրա նշվում են ամսաթիվը, վերջնաժամկետը և մանրէազերծումը կատարող բուժքրոջ ստորագրությունը,					2.0	Դիտողական Հարցում	
37.5.	մանրէազերծող սարքից մանրէազերծ տուփերը հանելուց հետո սառելու ողջ ընթացքում ծածկվում են մանրէազերծ սավանով,					2.0	Դիտողական Հարցում	
37.6.	գոլորշային մանրէազերծումն իրականացնում է համապատասխան ուսուցում անցած և մանրէազերծիչ սարքի հետ աշխատանքի թույլտվություն ունեցող բուժաշխատողը:					2.0	Փաստաթղթային	

38.	Գոլորշիով մանրէազերծված բժշկական արտադրատեսակները պահպանվում են՝	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 66						
38.1.	ցանկացած տեսակի մանրէազերծման տուփում, այն բացելուց հետո՝ մինչև 24 ժամ,					3.0	Դիտողական Հարցում	
38.2.	չբացված առանց ֆիլտրի մանրէազերծման տուփում՝ 72 ժամ,					3.0	Դիտողական Հարցում	
38.3.	չբացված ֆիլտր ունեցող մանրէազերծման տուփում՝ 21 օր,					3.0	Դիտողական Հարցում	
38.4.	առանց փաթեթավորման մանրէազերծման տուփում մանրէազերծված բժշկական արտադրատեսակները՝ մանրէազերծ սեղանի վրա՝ 6 ժամ					3.0	Դիտողական Հարցում	
39.	Մանրէազերծ սեղանը պատրաստելուց անմիջապես հետո նշվում են պատրաստման ամիսը, ամսաթիվը, ժամը,	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 66				3.0	Դիտողական	
40.	Ցանկացած տեսակի մանրէազերծման տուփը բացելուց հետո նշվում են բացելու ամիսը, ամսաթիվը, ժամը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 66				3.0	Դիտողական	
41.	Գոլորշային մեթոդով մանրէազերծման սարքերի աշխատանքային ռեժիմի գրանցումներն իրականացվում են համապատասխան մատյանում: **Նշում 3***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 64				3.0	Փաստաթղթային	
42.	Օդային մանրէազերծող սարքերում բժշկական արտադրատեսակները բեռնելիս՝	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի						

		սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 72						
42.1.	մանրէազերծման խցում մետաղական ցանցի վրա դասավորվում են մեկ շերտով, առանց իրար հպվելու, բացվող գործիքները բացված վիճակում,					3.0	Դիտողական Հարցում	
42.2.	խոշոր բժշկական արտադրատեսակները տեղադրվում են մանրէազերծող սարքի խցիկի վերին դարակում, որպեսզի չխոչընդոտեն դեպի վեր տաք օդի հոսքին:					3.0	Դիտողական Հարցում	
43.	Նախքան օդային մանրէազերծումն սկսելը, բժշկական արտադրատեսակները չորացվում են՝ դասավորվում մանրէազերծված սավանի վրա՝ մինչև տեսանելի խոնավության վերանալը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 73				2.0	Դիտողական Հարցում	
44.	Կրաֆթ թղթով փաթեթավորված բժշկական արտադրատեսակների փաթեթի վրա նշվում են մանրէազերծման ամսաթիվը և մանրէազերծում կատարած բուժքրոջ ստորագրությունը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 70				2.0	Դիտողական	
45.	Չոր օդով մանրէազերծման սարքերի աշխատանքային ռեժիմի գրանցումներն իրականացվում են համապատասխան գրանցամատյանում: **Նշում 4***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 76				3.0	Փաստաթղթային	
46.	Գլասպերլենային մանրէազերծման համար չոր փաթեթավորված բժշկական արտադրատեսակներն ամբողջությամբ տեղադրվում են շիկացած ապակյա գնդիկներով լցված խցիկի մեջ՝ առնվազն 15 մմ խորությամբ, 20-180 վայրկյան տևողությամբ: Մանրէազերծման տևողությունն ընտրվում է տվյալ սարքի կիրառման հրահանգի համաձայն:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 79				3.0	Դիտողական Հարցում Փաստաթղթային Լաբորատոր	

47.	Քիմիական նյութերի լուծույթներով մանրէազերծում իրականացնելիս՝	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 82						
47.1.	մանրէազերծող նյութի մնացորդները բժշկական արտադրատեսակների վրայից լվացվում են առատ մանրէազերծ ջրով՝ ասեպտիկ պայմաններում,					3.0	Դիտողական Հարցում	
47.2.	քիմիական նյութերի լուծույթներում մանրէազերծված բժշկական արտադրատեսակները լվացվում են մանրէազերծ ջրով և անմիջապես օգտագործվում կամ դասավորվում են մանրէազերծ սեղանի վրա կամ տեղադրվում են մանրէազերծ տուփերում (բիքսերում) մանրէազերծ սավանով կամ թանզիֆե անձեռոցիկով փաթաթված՝ պահպանելով տվյալ տեսակի բիքսի պահպանմանը ներկայացվող պահանջները՝ կից հրահանգի համաձայն,					3.0	Փաստաթղթային Լաբորատոր	
47.3.	քիմիական նյութերի լուծույթներով մանրէազերծումը կատարվում է հերմետիկ փակվող ապակյա, մետաղյա, ջերմակայուն պլաստմասսայե, արծնապատ (առանց վնասման) տարողություններում,					2.0	Դիտողական	

47.4.	քիմիական նյութերի լուծույթներով բժշկական արտադրատեսակներն մանրէազերծման են ենթարկվում չոր վիճակում պահպանելով տվյալ նյութի կից հրահանգով պահանջվող մանրէազերծման պահաժամը,					2.0	Դիտողական	
47.5.	քիմիական մանրէազերծման աշխատանքներն իրականացվում են ներհոս-արտաձիգ օդափոխությամբ կամ լավ օդափոխվող տարածքում պահպանելով անվտանգության կանոնները,					2.0	Դիտողական	
47.6.	մանրէազերծող քիմիական նյութի աշխատանքային լուծույթը պատրաստվում է նյութին կից հրահանգին համապատասխան:					2.0	Դիտողական Փաստաթղթային	
48.	Բժշկական արտադրատեսակների բոլոր խոռոչներն ու խողովակները լցվում են աշխատանքային լուծույթով և մանրէազերծման ողջ ընթացքում գործիքի վրա ապահովվում է 1 սմ-ից ոչ պակաս լուծույթի շերտի հաստությունը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 83				2.0	Դիտողական Հարցում	
49.	Էնդոսկոպները (ներդիտակները) լվանալուց հետո չորացվում են 70% սպիրտով կամ օդի շիթով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 83				3.0	Դիտողական Հարցում	
50.	Քիմիական նյութերի լուծույթներով մանրէազերծված էնդոսկոպները պահվում են մանրէազերծ պայմաններում հետևելով արտադրողի կողմից ներկայացված շահագործման հրահանգի պահանջներին:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 86				2.0	Դիտողական Լաբորատոր	

51.	Բժշկական արտադրատեսակների լուծույթից հանելու, մանրէազերծ ջրով լվանալու և չորացնելու ողջ ընթացքում բուժանձնակազմն օգտագործում է անհատական պաշտպանության միջոցներ՝ դիմակ, մանրէազերծ խալաթ, բժշկական գլխարկ և ձեռնոցներ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 84				3.0	Դիտողական Հարցում	
52.	Բազմակի օգտագործման համար նախատեսված քիմիական լուծույթներ կիրառելիս, յուրաքանչյուր օգտագործումից առաջ թեստ-զոլի օգնությամբ որոշվում է լուծույթի պիտանելիությունը՝ ազդող նյութի արդյունավետ նվազագույն խտությունը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 85				3.0	Դիտողական Հարցում	
53.	Գազային մանրէազերծող սարքերում մանրէազերծումն իրականացվում է ապահովելով բժշկական արտադրատեսակների մանրէազերծման պահաժամը և փաթեթավորման պահանջները՝ արտադրողի հրահանգին համապատասխան:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 87				2.0	Դիտողական Փաստաթղթային	
54.	Էթիլեն օքսիդով մանրէազերծումն իրականացվում է գազային մանրէազերծող սարքերում՝ սարքի հրահանգին համապատասխան:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 88				3.0	Դիտողական Փաստաթղթային	
55.	Բժշկական արտադրատեսակները մինչ գազային մանրէազերծումը չորացվում են:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 90				2.0	Դիտողական Հարցում	

56.	Էթիլեն օքսիդով բժշկական արտադրատեսակների մանրէազերծումն իրականացվում է թղթե, մագաղաթե, կրաֆթ-թղթի երկտակ փաթեթի կամ հատուկ այդ մեթոդի համար նախատեսված փաթեթների մեջ, իսկ փաթեթների տեղափոխումը՝ փակ վիճակում՝ տուփերով կամ գործվածքե պարկերով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 91				3.0	Դիտողական Լաբորատոր	
57.	Ջրածնի գերօքսիդի հիմքի վրա մանրէազերծումը կատարվում է պլազմային մանրէազերծող սարքում համաձայն տվյալ սարքին կից հրահանգի պահանջների:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 92				3.0	Դիտողական Փաստաթղթային	
58.	Պլազմային մանրէազերծման պահանջներն են.	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 95						
58.1.	մանրէազերծման տևողությունը 28-72 րոպե,					3.0	Փաստաթղթային	
58.2.	բժշկական արտադրատեսակների մանրէազերծումն իրականացվում է միայն փաթեթավորված,					3.0	Դիտողական	
58.3.	փաթեթավորված բժշկական արտադրատեսակները պլազմային մանրէազերծումից հետո պահվում են ասեպտիկ պայմաններում:					2.0	Դիտողական Լաբորատոր	
59.	Քիմիական մեթոդով մանրէազերծման ռեժիմի հսկողության արդյունքները գրանցվում են համապատասխան գրանցամատյանում: **Նշում 5***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 96				2.0	Փաստաթղթային	

60.	Օզոնային մեթոդով մանրէազերծող սարքերում բժշկական արտադրատեսակների մանրէազերծման պահաժամը և փաթեթավորման պահանջները կատարվում են սարքն արտադրողի հրահանգներին համապատասխան:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 97				2.0	Դիտողական Փաստաթղթային Լաբորատոր	
61.	Պահպանվում են մանրէազերծված բժշկական արտադրատեսակների պահպանման ժամկետները՝ ըստ փաթեթավորման տեսակների: **Նշում 6***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 99				2.0	Դիտողական	
62.	Փաթեթների վրա նշվում են մանրէազերծման ամսաթիվը և օգտագործման վերջնաժամկետը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 100				2.0	Դիտողական	
63.	Վերջնաժամկետը չլրացած, սակայն վնասված, խոնավացած, պատռված, ծակված կամ ավելորդ նշումներով փաթեթները կրկին ենթարկվում են ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 101				2.0	Դիտողական Հարցում	
64.	Մանրէազերծ սեղանը պատրաստվում է անմիջապես բժշկական միջամտությունից առաջ: Մանրէազերծ սեղանի պիտանելիության ժամկետը լրանալուց հետո չօգտագործված և վերջնաժամկետը լրացած, սակայն չօգտագործած բժշկական արտադրատեսակները ենթարկվում են մանրէազերծման:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 102				3.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	

65.	Փաթեթավորված կամ մանրէազերծման տուփով կատարված մանրէազերծումից հետո մի բաժանմունքից մյուսը, կենտրոնական մանրէազերծման բաժանմունքից բաժանմունքներ կամ վիրասրահ բժշկական արտադրատեսակները տեղափոխվում են սավանով ծածկված, որը հեռացվում է մինչև մաքուր գոտի մտնելը:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 106				3.0	Դիտողական	
66.	Մանրէազերծող սարքը շահագործող անձի կողմից ամեն օր, յուրաքանչյուր շրջափուլի ժամանակ իրականացվում է մանրէազերծող սարքի աշխատանքի հսկողություն հետևյալ մեթոդների կիրառմամբ.	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 109						
66.1.	ֆիզիկական մեթոդ՝ իրականացվում է ջերմաստիճանի, ճնշման, պահաժամի և հարաբերական խոնավության օպերատիվ հսկողություն,					3.0	Փաստաթղթային Դիտողական	
66.2.	քիմիական մեթոդ՝ կիրառվում են քիմիական նյութեր, որոնց գույնը և ագրեգատային վիճակը փոխվում է (հալվում են) այն ջերմաստիճանում, որը մոտ է մանրէազերծման համար անհրաժեշտ ջերմաստիճանին:					3.0	Փաստաթղթային Դիտողական	
67.	Օգտագործվում են քիմիական զգայորոշիչներ՝	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 110						

67.1.	արտաքին զգայորոշիչներ, որոնք փակցվում են բժշկական արտադրատեսակների փաթեթների վրա և գնահատվում են անմիջապես մանրէազերծման ավարտից հետո,					3.0	Դիտողական Հարցում	
67.2.	ներքին զգայորոշիչներ, որոնք տեղադրվում են մանրէազերծվող բժշկական արտադրատեսակների հետ փաթեթի ներսում՝ անկախ փաթեթի տեսակից և գնահատվում են փաթեթները բացելուց հետո:					3.0	Դիտողական Հարցում	
68.	Իրականացվում է բժշկական արտադրատեսակների մանրէազերծման որակի հսկողություն մանրէաբանական մեթոդով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 111				3.0	Փաստաթղթային Լաբորատոր	
69.	Մանրէազերծ նմուշների մանրէաբանական հետազոտություններն իրականացվում են բժշկական կազմակերպության մանրէաբանական լաբորատորիայում կամ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա նման գործունեություն ծավալող կազմակերպությունում՝ պայմանագրային հիմունքներով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 117				3.0	Փաստաթղթային	
70.	Մանրէաբանական հետազոտությունները կազմակերպվում են պլանային՝ ամիսը մեկ անգամ պարբերականությամբ, ինչպես նաև արտահերթ՝ համաճարակաբանական ցուցումներով կամ մանրէազերծման գործընթացում թերություններ և խախտումներ հայտնաբերելիս:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 118				3.0	Փաստաթղթային Լաբորատոր	

71.	Կատարվում է մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման որակի հսկողություն մանրէաբանական հետազոտությունների իրականացմամբ բժշկական կազմակերպության մանրէաբանական լաբորատորիայում կամ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա նման գործունեություն ծավալող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով, որոնք արձանագրվում են:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 121				3.0	Փաստաթղթային Լաբորատոր	
72.	Պլանային և համաճարակաբանական ցուցումով հսկողության նպատակով ախտահանման որակի նմուշառում կատարվում է սանիտարացուցադրական մանրէների, ախտածին և պայմանական ախտածին մանրէների հայտնաբերման վերաբերյալ:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 121				3.0	Փաստաթղթային Լաբորատոր	
73.	Ստացիոնար բժշկական կազմակերպությունում ընթացիկ սանիտարական հսկողության ժամանակ մանրէաբանական հետազոտության են ենթարկվում օդային միջավայրը, բժշկական գործիքները, այդ թվում՝ կարի և վիրակապական նյութերը, վիրահատական սպիտակեղենը, բուժանձնակազմի ձեռքերը և հագուստը, նորածինների և կանանց խնամքի միջոցները, դեղամիջոցները, արտաքին միջավայրի տարբեր օբյեկտները (գույքը, ներառյալ սարքավորումները, մակերեսները)՝ 2 մահճակալին՝ 1 լվացուկից ոչ պակաս հաշվարկով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 121				3.0	Փաստաթղթային	

74.	Ստացիոնար բժշկական կազմակերպությունում պահպանվում են մանրէազերծման որակի հսկողության համար պահանջվող հետազոտությունների ծավալները: **Նշում 7***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 121				3.0	Փաստաթղթային	
75.	Առողջության առաջնային պահպանման և ստոմատոլոգիական ծառայություն մատուցող կազմակերպություններում պահպանվում են շրջակա միջավայրի մակերեսներից ախտահանման որակի և բժշկական արտադրատեսակների մանրէազերծման որակի նկատմամբ հսկողության համար պահանջվող հետազոտությունների ծավալները: **Նշում 8***	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 124				3.0	Փաստաթղթային	
76.	Ներքին հսկողության ընթացքում հայտնաբերված միկրոօրգանիզմները հետազոտվում են նաև ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության վերաբերյալ, որն իրականացվում է բժշկական կազմակերպության մանրէաբանական լաբորատորիայում կամ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա նման գործունեություն ծավալող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով:	ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելված, կետ 126				3.0	Փաստաթղթային	

Ծանոթություններ
Նշում 1*

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՄԱՔՐՄԱՆ, ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՌԵԺԻՄԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Բաժանմունք _____

Ամսաթիվ	Բժշկական արտադրատեսակների		Մաքրում		Մաքրող նյութի անվանում	Ախտա-հանում	Ախտահանող նյութի		Ախտահանման ռեժիմ		Կատարողի ստորագրություն
	լրակազմ /անվանում	քանակ	մեքենայաց-ված	ձեռքով			անվանում	խտություն՝ ըստ կից հրահանգի (%)	սկիզբ	վերջ	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**

Նշում 2*

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

Գրանցման սկիզբը _____ Ավարտված է _____

Ամսաթիվ	Նախամանրէազերծման մշակման ենթարկված բժշկական արտադրատեսակներ		Նախամանրէազերծման մշակման որակի հսկողության ենթարկված բժշկական արտադրատեսակների քանակ	Նախամանրէազերծման մշակման որակի հսկողության արդյունքները		Նախամանրէազերծման մշակման որակի հսկողությունը կատարող անձի ստորագրություն
	լրակազմ /անվանում	քանակ		արյան հետքերի առկայություն	լվացող հեղուկի հետքերի առկայություն	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**

Նշում 3*

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ

Մանրէազերծիչի մակնիշը _____

Գրանցման սկիզբը _____ Ավարտված է _____

Ամսաթիվ	Բժշկական արտադրա-տեսակների անվանում /լրակազմ	Ավտոկլավի միացման ժամ	Մանրէազերծման ռեժիմ				Մանրէազերծիչ սարքի աշխատանքի հսկողություն (քիմիական զգայորոշիչ)	Ավտոկլավն աշխատացնողի ստորագրություն
			սկիզբ, ժամ	վերջ, ժամ	ճնշում	ջերմաստիճան		
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**

Նշում 4*

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՉՈՐ ՕԴՈՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ

Մանրէազերծիչի մակնիշը _____

Գրանցման սկիզբը _____ Ավարտված է _____

Ամսաթիվ	Բժշկական արտադրա-տեսակների /լրակազմ		Մանրէազերծիչ սարքի միացման ժամ	Մանրէազերծիչ ռեժիմ				Մանրէազերծիչ սարքի աշխատանքի հսկողություն (քիմիական զգայորոշիչ)	Մանրէազերծումը կատարող անձի ստորագրություն
	անվանում	քանակ		սկիզբ ժամ	ջերմաս-տիճան (180^0)	վերջ ժամ	հանելու ժամ		
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**

Նշում 5*

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ

Գրանցման սկիզբը _____ Ավարտված է _____

Ամսաթիվ	Բժշկական արտադրատեսակների		Մանրէազերծող նյութի անվանում/խտություն՝ ըստ հրահանգի պահանջի (%)	Մանրէազերծող նյութի պատրաստման ամսաթիվ	Մանրէազերծող նյութում ակտիվ նյութի որոշման արդյունք (թեստերի միջոցով)	Մանրէազերծող սարքի միացման ժամ/կամ քիմիական լուծույթի մեջ ընկղման ժամ	Մանրէազերծման ռեժիմ		Կատարող անձի ստորագրություն
	անվանում	քանակ					սկիզբ ժամ	վերջ ժամ	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**

Նշում 6*

ՄԱՆՐԷԱԶԵՐԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փաթեթի տեսակը	**Պահպանման ժամկետը**
Թուղթ, կտոր-գործվածք և այլ նյութեր, որոնք պարունակում են ցելյուլոզա	3 օր
Երկշերտ թուղթ, կտոր՝ սինթետիկ հիմքի վրա	2 ամիս
Թղթե և պլաստիկե համակցված նյութ ապարատով ջերմության միջոցով փակած զգայորոշիչ փաթեթավորման ժապավենով փակած	6 ամիս 3 ամիս
Առանց ֆիլտրի մետաղական տուփ	3 օր
Ֆիլտրով մետաղական տուփ	21 օր

Նշում 7*

Ստացիոնար բժշկական կազմակերպությունում կենտրոնական մանրէազերծման բաժանմունքի առկայության դեպքում մանրէազերծման որակի հսկողության են ենթարկվում միաժամանակ մանրէազերծված նմուշների 1%-ը, սակայն 3-ից ոչ պակաս:

Կենտրոնական մանրէազերծման բաժանմունքի բացակայության դեպքում, եթե մանրէազերծման գործընթացը կազմակերպվում է բաժանմունքներում, մանրէազերծման որակի հսկողության ենթակա են յուրաքանչյուր մանրէազերծման սենքի համար առնվազն 3 նմուշի հաշվարկով, բայց ոչ պակաս բայց 10 նմուշից (եթե կազմակերպությունում առկա է մինչև 3 մանրէազերծման սենք), ինչպես նաև միջամտություն իրականացնող յուրաքանչյուր աշխատատեղի համար 3 նմուշի հաշվարկով, բայց 10 նմուշից ոչ պակաս (եթե կազմակերպությունում առկա է մինչև 3 աշխատասենյակ):

Նշում 8*

Առողջության առաջնային պահպանման և ստոմատոլոգիական ծառայություն մատուցող կազմակերպություններում շրջակա միջավայրի մակերեսներից ախտահանման որակի և բժշկական արտադրատեսակների մանրէազերծման որակի նկատմամբ նմուշառումն իրականացվում է պացիենտի զննման, ախտորոշման յուրաքանչյուր աշխատասենյակից, կենտրոնական մանրէազերծման բաժանմունքից 3 լվացուկի հաշվարկով, բայց 10 լվացուկից ոչ պակաս, եթե կազմակերպությունում առկա է մինչև 3 աշխատասենյակ: Կենտրոնական մանրէազերծման բաժանմունքի առկայության դեպքում մանրէազերծման որակի վերաբերյալ հսկողության են ենթարկվում միաժամանակ մանրէազերծված նմուշների 1%-ը:

1.	«Այո» - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է	v		
2.	«Ոչ» - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		v	
3.	«Չ/պ» - չի պահանջվում, չի վերաբերվում			v

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանով հաստատված N 3.1.1- 029- 2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմատիվներ:

Տեսչական մարմնի ծառայող _____ **Տնտեսավարող** _____ »:
(ստորագրություն) (ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ